ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԹԻՎ 2 ԴԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ը

ԱՆՀԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄԻ ԸՆԴՈՒՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Քաղ. Երեւան 26 հոկտեմբերի 2010թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի
թիվ 2 դատական կազմը՝

Նախագահությամբ՝ Ֆ. Թոխյանի
Անդամակցությամբ՝ Մ. Թոփուզյանի
Հ. Նազարյանի

Քննության առնելով քաղաքացի Պերճ Հակոբյանի անհատական դիմումի
ընդունելիության հարցը,

ՊԱՐԶԵՑ.

Համաձայն ՀՀ Սահմանադրության 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի՝ քաղաքացի Պերճ Հակոբյանը 2010թ. հոկտեմբերի 6-ին դիմել է ՀՀ սահմանադրական դատարան՝ խնդրելով «Հայաստանի Հանրապետության քաղաքացիության մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 5-րդ մասը եւ 13.1-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ պարբերությունը ճանաչել ՀՀ Սահմանադրության 30.1-րդ հոդվածի 2-րդ մասին եւ 43-րդ հոդվածին հակասող եւ անվավեր:

Տվյալ անհատական դիմումի նախնական ուսումնասիրությունը ցույց տվեց, որ՝

1.Դիմողի կարծիքով վիճարկվող դրույթները պարունակում են Հայաստանի Հանրապետության քաղաքացի մնալու պարտադրանք, սահմանափակում են ՀՀ քաղաքացիությունից ազատորեն դուրս գալու՝ ՀՀ քաղաքացու սահմանադրական իրավունքը, հետեւաբար հակասում են ՀՀ Սահմանադրության 30.1-րդ հոդվածի 2-րդ մասին եւ 43-րդ հոդվածին:

2.Ներկայացված դիմումը համապատասխանում է ՀՀ Սահմանադրության 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 27-րդ, 28-րդ հոդվածների եւ 69-րդ հոդվածի 1-ին, 2-րդ, 4-րդ, 5-րդ մասերի պահանջներին:

Ելնելով վերոգրյալից եւ ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի 6-րդ մասով՝ ՀՀ սահմանադրական դատարանի թիվ 2 դատական կազմը

Ո Ր Ո Շ Ե Ց.

«Հայաստանի Հանրապետության քաղաքացիության մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 5-րդ մասի եւ 13.1-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ պարբերության՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ քաղաքացի Պերճ Հակոբյանի անհատական դիմումն ընդունել քննության, կազմել գործ, որով պատասխանող կողմ ճանաչել ՀՀ Ազգային ժողովին:

Նախագահող՝

Անդամներ՝

26 հոկտեմբերի 2010 թվականի
ՍԴԴԿՈ/2-33